

**Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի  
ռեկտոր Ա.Ս.Աղաբաբյանի  
2010 թ. տարեկան հաշվետվություն**

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի (այսուհետ կրճատ՝ ԵՄԽՀ) ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը ուսանողության հետ համատեղ որոշակի աշխատանքներ է ծավալել մանակավարժական, գիտակրթական, տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ու բարելավման ուղղություններով:

Փորձենք ավելի հանգամանալից անդրադառնալ համալսարանի գործունեությանը ըստ վերոհիշյալ ոլորտների.

**Կրթական գործունեություն**

Շարունակական աշխատանքներ են տարվում ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կազմակերպման, եվրոպական չափորոշիչներին համապատասխան որակի ներքին ապահովման համակարգի բարելավման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

**Կրեդիտային համակարգ**

2008թ. համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում գործնականում կիրառության մեջ դրվեց կրեդիտային համակարգը: Սկսած 2008-ից պարբերաբար իրականացվում են կրեդիտային համակարգին նվիրված ճանաչողական և տեղեկատվական սեմինարներ ու լսումներ: Հրատարակվել է կրեդիտային համակարգի բովանդակությանը նվիրված գրքույկ, որտեղ ուսանողության համար բավականին մատչելի ձևով ներկայացված են կրեդիտային համակարգի առանձնահատկություններն ու կիրառման ձևերը: Կրեդիտային համակարգի անցման հետ կապված վերանայվել են քննական հարցաշարերը:

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի

ուսանողների և ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հաշվետու ուս. տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

### **Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում**

2010 թ-ին բոլոր մասնագիտություններով վերանայվել են ուսումնական պլանները, կատարվել են համապատասխան փոփոխություններ, հաշվի առնելով փոփոխությունները կազմվել են նոր ուսումնական պլաններ, որոնք հաստատվել են ռեկտորի կողմից 2010թ.:

Ավելին 2010թ-ին, երբ արդեն ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատվել էին «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ պետական կրթական չափորոշիչները, բուհում այդ մասնագիտությամբ ստեղծվեց նոր ուսումնական պլան, որը լիովին համապատասխանում է տվյալ մասնագիտությամբ առկա պետական կրթական չափորոշիչներին: Իրականացվել է նաև նոր ստեղծված ուս. պլանի համեմատական վերլուծություն ՀՊՏՀ-ի նույն մասնագիտությամբ ուսումնական պլանի հետ:

### **Ստուգումներ և ներքին վերահսկողություն**

2010թ-ին համալսարանում իրականացվել են ստուգումներ ՀՀ ԿԳ նախարարության լիցենզավորման բաժնի կողմից: Ստուգումների արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

2010թ-ին ԵՄԽՀ-ում իրականացվել են ստուգումներ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից: Ստուգումների արդյունքները եղել են գոհացուցիչ:

Համալսարանում որոշակի աշխատանքներ են տարվել ներբուհական վերահսկողության խմբի աշխատանքների բարելավման ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել միջանկյալ և հանրագումարային քննությունների անցկացմանը, դրանց արդիականացմանը, օբյեկտիվության և թափանցիկության հարցերին:

Վերահսկվում են նաև ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքները, որոնք ներառված են համալսարանի մանկավարժական գործընթացում: Ուսումնական

պլանով նախատեսված կուրսային աշխատանքները և ռեֆերատները կատարվել են ժամանակին: Արդյունքները գոհացուցիչ են:

Պետական ավարտական քննությունները կազմակերպվել և անց են կացվել ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված պահանջներին համապատասխան:

### **Ուսումնական և արտադրական պրակտիկա**

Պրակտիկան ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է, որի ճիշտ կազմակերպումն ու արդյունավետ անցկացումը կրթության որակի գրավականներից են:

Հաշվետու տարում նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար համալսարանը տարբեր պետական և ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքել է պայմանագրեր, որոնց համապատասխան կազմակերպվել են ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաները:

Պրակտիկաների մասնակցած ուսանողների ընդհանուր թիվը եղել է 423 /III (առկա) և IV (առկա և հեռակա) կուրսերում/:

### **Ընդունելության նախապատրաստում**

Հաշվետու տարում մեծ աշխատանք է տարվել պետական մասնագիտական հաստատությունների 2009/10 ուս.տարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Խիստ կարևորելով հանրակրթային դպրոցների բարձր դասարանների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ ուսումնական վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի մի շարք դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ:

Վերոհիշյալ համալիր աշխատանքները տվել են իրենց արդյունքները:

### **Ընդունելություն**

Հաշվետու ուս.տարում բուհ են ընդունվել 241 ուսանող,

որից մագիստրատուրա – 11

բակալավր (առկա) – 165

բակալավր (հեռակա) – 65

Օտարերկրացիներ ընդունվել են ընդամենը -42

մագիստրատուրա – 3

բակալավր (առկա) – 24

բակալավր (հեռակա) – 15

### **Հիմնական ուսանողական համակազմ**

Ընթացիկ ուս.տարում ուսանողների ընդհանուր թիվը - 947

որից մագիստրատուրա – 18

բակալավր (առկա) – 643

բակալավր (հեռակա) – 286

Մովորում են օտարերկրացիներ ընդամենը - 102

մագիստրատուրա – 5

բակալավր (առկա) – 59

բակալավր (հեռակա) – 38

### **Շրջանավարտներ**

2010 թ. համալսարանի ռեկտորի հրամանով հավատարմագրված 6/վեց/ մասնագիտությունների գծով ավարտական քննություններին թույլատրված 203 ուսանողներից քննություններին մասնակցել են 202-ը: Ուսանողներից 197-ը բոլոր քննությունները հանձնել են միայն դրական գնահատականներով, այդ թվում 36-ը ստացել են միայն <<գերազանց>> գնահատականներ, որոնցից 25-ը պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

### **Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.**

Մասնագիտութ.	Թույլ մասն.	Մասնակցել են	Միջին դրական գնահատական	Միայն գերազանց գնահատական	Գերազանցության դիպլոմ	Դիպլոմ չեն ստացել
Հայոց լեզու և գրակ.	33	33	33	8	8	-
Օտար լ. և գրակ.	20	20	20	7	2	-
Ինֆ. և կիր. մաթեմ.	24	24	24	6	6	-

Մանկ. և մեթոդիկա	47	46	43	6	2	3
Միջ. տնտես. հարաբ.	37	37	37	6	4	-
Իրավագիտություն	42	42	40	3	3	2
Ընդամենը	203	202	197	36	25	5

### Դասախոսական կազմ

1. Դասախոսների ընդհանուր թիվը – 61
  - որից հիմնական – 34
2. Գիտ. դոկտոր կամ պրոֆեսոր - 4
  - որից հիմնական – 0
3. Գիտ, թեկնածու, դոցենտ - 32
  - որից հիմնական – 13
4. Դասախոս կամ ասիստենտ – 25
  - որից հիմնական – 21

### Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

ԵՄԽՀ-ն դասախոսական կազմի մասնագիտական որակն ու գործունեությունն ապահովելու նպատակով կատարել և ապագայում պլանավորել է կատարելու մի շարք ընթացակարգեր:

Համալսարանի դասախոսների ուժերով հրատարակվել են.

1. Քթրյան Գագիկ – 1. On the Gasca – Maeztu conjecture in  $R^3$  East J on Approx,2010  
 2. On a conjecture on Lagrange interpolation in  $R^3$ , Reports of the Nas of Armenia-2010  
 3. On the number of maximal planes of  $GC^2$  sets in  $R^3$  Jaen, on Approx2010
2. Գալստյան Օլյա – Գիտելիքամետ և սոցիալամետ ձեռնարկությունը որպես բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմք-Երևան-2010թ.
3. Առաքելյան Վալերի և ուրիշներ 1. Կազմակերպությունների վճարունակության և իրացվելիության հասկացությունների բացահայտման մի քանի հարցեր, գիտական հոդվածների ժողովածու,

Երևան Իրավունքվ 2010թ.

2. Կիզակետման, առաջինը մուտք գործման և սիներգիզ մի ռազմավարության մի քանի հարցեր, Իրավունք-2010
3. Միջազգային բանկերի խմբի գործունեության գնահատումը ՀՀ-ում, Եչևան-2010թ.

4. Մկրտչյան Սարգիս - О приближении в среднем полиномиалии с пропусками на не Кара теодориевых областях, Армения-2010

5. Հարությունյան Արմեն – 1. Դպրոցական դաստիարակության գերակա ուղղությունները աշխարհի մի շարք երկրներում, Բանբեր, Լինգվա-2010թ.

2. Արշակ Չոպանյանի <<Անահիտ>> հանդեսը գեղարվեստական դաստիարակության մասին, ԼՂՀ, Ստեփանակերտ-2010թ.

3. <<Տարաշ>> պարբերականը գեղարվեստական դաստիարակության մասին /1890-1900թթ/ ՀՀ ԿԳՆ-2010թ.

4. Արգար Հովհաննիսյանի <<Արձագանք>> հանդեսը գեղագիտական դաստիարակության մասին / 1882-1898թթ/ ԼՂՀ-2010թ.

5. Художественное образование в Армении. Перспективы развития творческого потенциала в веке, Ереван-2010 г.

6. Նիկողոսյան Արամ - Նախնական մասնագիտական կրթության մասին տնտեսական-սոցիալական արդյունավետության մասին, Երևան-2010թ.,

### **Հանրային տեղեկատվական համակարգեր**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել հետևյալ ուղղություններով.

- համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում;
- <<Մովսես Խորենացի>> գիտական հանդեսի հրատարակում;
- մեթոդական աշխատանքների իրականացում;

- համացանցային ռեսուրսների զարգացում և համացանցային տիրույթում ԵՄԽՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում;
- ֆոտո- և տեսանյութերի ստեղծում և արխիվացում;
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Հետևողական աշխատանք է կատարվել ԵՄԽՀ-ում հանրային նշանակության միջոցառումների պատշաճ լուսաբանման ուղղությամբ: ԶԼՍ-ի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՄԽՀ-ին հասցեագրված տեղեկատվություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

2010թ. համալսարանը ստեղծեց իր ինտերնետային կայքը, որը հնարավորություն է տալիս առավել լայն ու արդյունավետ հաղորդակցում ապահովել արտաքին աշխատանքի հետ:

### **Աշխատանքը ուսանողների և շրջանավարտների հետ**

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄԽՀ ուս. խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցելով ուսանողության համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

ՈւՄ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողների գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացվել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՄԽՀ ուսանողներին, հատկապես առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու համար:

Կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնցից կարելի է նշել համալսարանի դահլիճում հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կազմակերպված թատերական միջոցառումը, որի ժամանակ բեմադրվեց Սողոմոն Թեհլերյանի կյանքն ու գործունեությունը:

### **Կնքվել են պայմանագրեր**

Ուսանողների պրակտիկաները կազմակերպելու համար պայմանագրեր են կնքվել հետևյալ կազմակերպությունների հետ.

1. ՀՀ փաստաբանների պալատ
2. Վ. Տերյանի անվան թիվ 60 դպրոց
3. Լ. Շանթի անվան թիվ 4 դպրոց
4. ԳԼՈՍՍԱ իրավապաշտպան ՀԿ
5. <<Մաստեռ Սթայլ>> ՍՊԸ
6. <<Արդիշինինվեստբանկ>> ՓԲԸ
7. <<Բյուրակն>> ՍՊԸ
8. <<Անանիա Շիրակացու>> անվան ճեմարանի <<Փոքրիկ ճեմարանիկ>> կրթահամալիր: